

Դասախոսություն 3.1. ՄԻԱՎ կարգավիճակի հետ կապված խտրականության պատճառները և դրսևորումները

Գրեթե բոլոր հասարակություններում բարձր է խարանի և խտրականության մակարդակը ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ: ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խտրականությունը տարածված է նաև առողջապահության ոլորտում:

ՄԻԱՎ վարակ հիվանդության և դրա համաճարակի առանձնահատկություններից էլնելով ՄԻԱՎ կարգավիճակի հետ կապված խտրականության պատճառները, արտահայտությունները, հետևանքները անհրաժեշտ է դիտարկել ավելի մանրամասն:

ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի հետ կապված խարանին և խտրականությանը ենթարկվում են ինչպես ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ, այնպես էլ ՄԻԱՎ-ի նպատմամբ խոցելի խմբերի ներկայացուցիչները՝ հիմնված նրանց առողջական վիճակի, սոցիալ-տնտեսական վիճակի, տարիքի, սեռի, սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության կամ թմրամիջոցներից կախվածության վրա:

ՄԻԱՎ կարգավիճակի հետ կապված խտրականության պատճառները

Մասնագետները առանձնացվում են ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ խարանի և խտրականության մի շարք պատճառներ, որոնցից են՝

- Վարակվելու վախը,
- Ամոթը, ՄԻԱՎ վարակի որպես ամոթալի հիվանդության ընկալումը,
- Հասարակությունում ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել ռիսկի ենթարկվող խմբերի նկատմամբ խարանի և խտրականության բարձր մակարդակը,
- ՄԻԱՎ-ի փոխանցման ուղիների որպես անբարոյական վարքի դրսևորումների ընկալումը,
- ՄԻԱՎ վարակը որպես մահացու հիվանդություն և պացիենտներին որպես «անհույս» պացիենտի ընկալումը և այլն:

ՄԻԱՎ համաճարակի պատմության ընթացքում հիմնված փոխանցման ուղիների և վարակի տարածվածության ձևավորվել է պատկերացում ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել ռիսկի ենթարկվող խմբերի մասին: Այդ խմբերն են՝

- Ներարկային թմրամիջոցներ օգտագործող անձիք,
- Սեռական ծառայություններ մատուցող կանայք,
- Տղամարդկանց հետ սեռական հարաբերություններ ունեցող տղամարդիկ:

Նշված խմբերի ներկայացուցիչները ենթարկվում են խտրականության նույնիսկ ՄԻԱՎ վարակի բացակայության դեպքում, իսկ ՄԻԱՎ վարակի դեպքում եղած խարանին գումարվում է հիվանդության հետ կապված խտրականությունը:



Չնայած նրան, որ աշխարհում ՄԻԱՎ համաճարակը մեծամասամբ տարածվում է վերը նշված խմբերի շրջանում, Հայաստանում ՄԻԱՎ վարակի դեպքերի մեծամասնությունը կապված է աշխատանքային միզրացիայի հետ: Միզրանտները համարվում են ՄԻԱՎ-ի նկատմամբ խոցելի խումբ: Հայաստանում թե՛ տղամարդկանց, թե՛ կանանց շրջանում ՄԻԱՎ-ը հիմնականում փոխանցվում է հետերոսեքսուալ ուղիով: Հայաստանում ՄԻԱՎ վարակակիր կանաց մեծամասնությունը վարակվել են իրենց մշտական գուզրնկերներից՝ ամուսիններից:

ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նտմամբ խտրականության հիմնական դրսևորումները առողջապահության ոլորտում

Բժշկակն օգնության և սպասարկման համար դիմելիս ՄԻԱՎ-ով ապրող մարդիկ հաճախ են հանդիպում խտրականության դրսևորումների: Առավել հաճախ հանդիպող դրսևորումներից են՝

- Բժշկական օգնություն տրամադրելու մեջ մերժելը,
- Պացիաենտի գաղտնիության իրավունքի խախտումը,
- Հավելյալ վճարների պահանջը,
- Ոչ լիարժեք սպասարկում տրամադրելը,
- Ոչ հոգատար և անհագալից պայմաններում պացիենտին սպասարկելը և այլն:

Բժշկական օգնություն տրամադրելու մեջ մերժել

ՄԻԱՎ վարակ ունեցող պացիենտին բժշկական օգնություն տրամադրելու մեջ հաճախ մերժում են վարակվելու վախի պատճառով:

Իրականում ՄԻԱՎ վարակ ունեցող պացիենտի բժշկական օգնություն ցուցաբերելիս վարակվելու հավանականությունը չափագանց ցածր է: Հայաստանում նման դեպքեր չեն արձանագրվել: Հիմնականում ՄԻԱՎ-ով վարակվելու ռիսկը լինում է ինվազիվ միջամտությունների ժամանակ, երբ վարակված արյունը կամ բավարար քանակությամբ վիրուս պարունակող հեղուկը ընկնում է բուժաշխատողի լորձաթաղանթների կամ մաշկի վնասված հատվածի վրա:

Արյան միջոցով փոխանցվող վարակների կանխարգելման համար նախատեսված ստանդարտ նախազգուշական միջոցառումները բավարար են մասնագիտական պարտականությունները կատարելիս ՄԻԱՎ-ով վարակվելը կանխարգելելու համար:

Բացի այդ, գոյություն ունի ՄԻԱՎ վարակի հետկոնտակտային կանխարգելու, որը զգալիորեն նվազեցնում է վարակի հավանականությունը: Հարցին ավելի լավ տիրապետելու համար առաջարկվում է անցնել «ՄԻԱՎ վարակ» առցանց դասընթացը:

Մերժման մեկ այլ պատճառ է հանդիսանում այն թյուր կարծիքը, որ ՄԻԱՎ-ով ապրողները պետք է բուժվեն իրենց համար նախատեսված հատուկ հաստատություններում: Իրականում, ՄԻԱՎ վարակ ունեցող պացիենտը բուժում է ստանում նույն հիմունքներով նույն հաստատություններում այնպես, ինչպես բոլոր պացիենտները: ՄԻԱՎ վարակ ունեցող պացիենտն հավասարապես օգտվում է բժշկական սպասարկում իրականացնողին ընտրելու իրավունքից:

ՄԻԱՎ վարակ ունեցող պացիենտին բժշկակն օգնություն չտրամադրելը հանդիսանում է ուղղակի խտրականություն:



ՀՀ Քրեական օրենսգիրք. Հոդված 129. Հիվանդին օգնություն ցույց չտալը

1. Հիվանդին առանց հարգելի պատճառի օգնություն ցույց չտալն այն անձի կողմից, ով պարտավոր էր դա ցույց տալ, եթե հիվանդի առողջությանն անզգուշությամբ պատճառվել է ծանր կամ միջին ծանրության վնաս՝ պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հիսնապատիկից հարյուրապատիկի չափով, կամ կալանքով՝ մեկից երկու ամիս ժամկետով:
2. Նույն արարքը, որն անզգուշությամբ առաջացրել է հիվանդի մահ՝ պատժվում է ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով կամ առանց դրա:

Պացիենտի գաղտնիության իրավունքի խախտում

Գաղտնիության իրավունքի խախտումը հանդիսանում է ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց նկատմամբ գրեթե ամենահաճախ հանդիպող խտրականության դրսևորումը: Հաճախ բուժաշխատողները բացահայտում են իրենց պացիենտի ՄԻԱՎ կարգավիճակը պացիենտի ընտանիքի անդամների, իրենց աշխատակիցների, այլ պացիենտների մոտ:

Բացի այդ, գաղտնիության իրավունքի խախտումը կարող է կրել համակարգված բնույթ: Օրինակ, երբ տեղամասային պոլիկլինիկայուն բնակիչների ամբուլատոր քարտերի տիտղոսաթերթի վրա կատարվում են նշումներ անձի ՄԻԱՎ կարգավիճակի կամ այլ հիվանդության մասին: Նման նշումները կարող են տեսանելի լինել այն մարդկանց, ում տեղեկացնելու վերաբերյալ անձը համաձայնություն չի տվել:

Իրականում, մարդկանց այն շրջանակն, ում անհրաժեշտ է տեղեկացնել ձեր պացիենտի ՄԻԱՎ կարգավիճակի մասին խիստ սահմանափակ է: Եվ նույնիսկ այդ մարդկանց տեղեկացնելու համար անհրաժեշտ է ստանալ պացիենտի համաձայնությունը կամ զգուշացնել պացիենտին, որ համաձայն N օրենքի, իր անձնական տվյալները հասանելի են լինելու համապատասխան օղակին: Օրինակ՝ պետական առողջապահության գործակալությանը:

Գաղտնիության իրավունքի պահպանումը պարտադիր է բոլոր հիվանդությունների և պացիենտների դեպքում, սակայն ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց դեպքում այն առավել կարևոր է խարանի և խտրականության բարձր մակարդակի պայմաններում: Հաճախ են դեպքերը, երբ անձի ՄԻԱՎ կարգավիճակի մասին տեղեկատվության տարածումը բերել է ծանր հետևանքների:

Հավելյալ վճարների պահանջը

Լինում են դեպքեր, երբ բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողը պահանջում է ՄԻԱՎ վարակ ունեցող պացիենտից հավելյալ վճար, պատճառաբանելով ախտահանման ինչ-որ հատուկ միջոցներ օգտագործելու անհրաժեշտությամբ, միջամտությունից հետո գործիքները կրկին օգտագործելու անհնարինությամբ և այլ: Հաճախ պացիենտները, չլինելով մասնագետ, հավատում և կատարում են հավելյալ վճարներ:

Անհրաժեշտ է հիշել, որ ՄԻԱՎ-ը բավականին անկայուն վիրուս է, նա ավելի անկայուն է քան հեպատիտ C վիրուսը և տուբերկուլոզի հարուցիչը, և ախտահանման ստանդարտ գործողությունները բավարար են հագուստը, գործիքները և այլ միջոցները ախտահանելու համար: Հետևաբար ցանկացած հավելյալ վճար պահանջելը չունի օբյեկտիվ հիմնավորում, ինչպես նաև օրինական չէ:

Եթե պացիենտը իրավունք ունի սպասարկվել պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության շրջանակներում, ապա լրացուցիչ գումարի պահանջը հանդիսանում է վարչական իրավախախտում:

ՀՀ Օրենսգիրք Վարչական իրավախախտումների վերաբերյալ. Հոդված 47-1. Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնելու կանոնները խախտելը

...

...

Բժշկական օգնություն և սպասարկում իրականացնողների կողմից պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին պայմանագրի առկայության դեպքում դրա իրավունքն ունեցող անձից բուժսպասարկման համար վճարներ գանձելը կամ բժշկական օգնության և սպասարկման ծառայությունների տրամադրումը մերժելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով:

Ոչ լիարժեք սպասարկում տրամադրել

Պացիենտին ոչ լիարժեք հետազոտությունների իրականացումը, բուժման ոչ բոլոր հնարավորություններն առաջարկելը հանգեցնում են առողջության առավելագույնս հասանելի մակարդակի իրավունքի խախտմանը:

Օրինակ՝ պացիենտին չի նշանակվում թանկարժեք հետազոտություն այն պատճառաբանությամբ, որ միևնույն է ոչ ինչ չի օգնելու և իմաստ չկա ՄԻԱՎ վարակակով պացիենտի վրա միջոցներ «վատնել»:

Ոչ հոգատար և անհազալից պայմաններում պացիենտին սպասարկել

Հոգատար և հարգալից սպասարկում ստանալը հանդիսանում է պացիենտի իրավունքներից, ինչը ամրագրված է Բնակչության բժշկական օգնության և սպասարկման օրենքով: Լինում են դեպքեր, երբ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց բժշկական օգնությունը տրամադրվում է ոչ հոգատար և անարգալից պայմաններում: Հիմնականում դա կապված է լինում ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց և ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել ռիսկի ենթարկվող խմբերի նկատմամբ կարծրատիպային և դատապարտող վերաբերմունքի հետ և չունի որևէ հիմնավոր արդարացում: Նման վերաբերմունքը կարող է արտահայտվել ինչպես վիրավորական արտահայտություններով, այնպես էլ ֆիզիկական բնույթի գործողություններով, օրինակ ներարկման ժամանակ դիտավորյալ ավել ցավ պատճառել: Հոգատար և հարգալից սպասարկում ստանալու իրավունքի խախտում է հանդիսանում նաև պացիենտին ոչ բարվոք վիճակում գտնվող հիվանդասենյակում կամ այլ սենյակում բուժման ընթացքը կազմակերպելը: